ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «10» 02 2023 թ.

ՀՐԱՄԱՆ N 50-Լ

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 749-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 25-րդ կետի 8-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Կադաստրի կոմիտեի գրանցման վարչության պետի 2023 թվականի փետրվարի 9-ի N Ն/1628-2023 զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումների՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, պետական գրանցման դադարեցման, կասեցման և մերժման, անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև պետական գրանցման հիմնական սկզբունքներից ու խնդիրներից բխող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացման տարածքային ենթակայությունը սահմանել հետևյալ կերպ.

1) Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր, Երևան քաղաք, ինչպես նաև սույն հրամանի 1-ին կետում նշված գործառույթները կարող է իրականացնել նաև Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում.

2) Լոռու մարզային ստորաբաժանում՝ Լոռու մարզ.

3) Շիրակի մարզային ստորաբաժանում՝ Շիրակի մարզ.

4) Սյունիքի մարզային ստորաբաժանում՝ Սյունիքի մարզ:

2. Սույն հրամանը ստորագրելուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել Կադաստրի կոմիտեի պաշտոնական ինտերնետային www.cadastre.am կայքում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում սույն հրամանի 2-րդ կետով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Recoverable Signature

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393